Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 372 - Ա
որոշման

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻՆ ԿԱՀՈՒՅՔԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության համայնքներին կահույքի տրամադրում՝ սոցիալական աջակցության նպատակով:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպություն, 6850 Քենդի պողոտա, սենյակ 102, Ռեսեդա, Կալիֆոռնիա 91355, Լոս Անջելես
4.	Ծրագրի կատարողը	«Ֆոքըս օն չիլդրեն նաու, ինկ.» բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ, քաղաք Երևան, Վիկտոր Համբարձումյան փողոց 2 շենք, 37 բնակարան, ՀՎՀՀ՝ 00130776
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան բնակավայր, Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան բնակավայր, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայր, Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայր Բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	8,544,700 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Արարատի մարզի Արտաշատ համայնքի Ոստան բնակավայրի մանկապարտեզ, Արմավիրի մարզի Փարաքար համայնքի Մերձավան բնակավայրի մանկապարտեզ, Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Մեծ Մասրիկ բնակավայրի մանկապարտեզ, Լոռու մարզի Վանաձոր համայնքի Վանաձոր բնակավայրի թիվ 5 մանկապարտեզ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2026 թվականի հունիսի 26-ից մինչև նոյեմբերի 25-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Կահույքի մատակարարում, նախատեսվում է իրականացնել 2026 թվականի հունիսի 26-ից մինչև նոյեմբերի 25-ն ընկած ժամանակահատվածում՝ 8,544,700 դրամի չափով:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1) Կահույքի մատակարարման աշխատանքների իրականացում՝ 8,544,700 դրամի չափով՝ ա) 69 հատ մանկական մահճակալ՝ 4,150,500 դրամ. բ) 122 հատ ներքնակ՝ 597,800 դրամ. գ) 22 հատ խաղային կենտրոն՝ 587,400 դրամ. դ) 65 հատ պահարան՝ 1,123,200 դրամ. ե) 34 հատ ճաշասեղան՝ 469,200 դրամ. զ) 140 հատ մանկական աթոռակ՝ 833,000 դրամ. է) 8 հատ նստարան՝ 81,600 դրամ. ը) 6 հատ աշխատասեղան՝ 237,000 դրամ. թ) 12 հատ աթոռ՝ 264,000 դրամ. ժ) 6 հատ գրատախտակ՝ 111,000 դրամ. ժա) բեռնափոխադրում՝ 90,000 դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպչական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն է նախատեսվում տեղական ինքնակառավարման մարմին-ների հետ:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

23.06.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ